1000 խոշոր հարկատուների կողմից 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1,27 տրլն դրամ, ինչը 17%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): 2023թ. մակարդակը բարձր է ոչ միայն 2022թ, այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ մինչճգնաժամային համարվող ժամանակահատվածի նկատմամբ: Ավելին, 2018-ի համեմատությամբ, 1000 խոշոր հարկատուների վճարած հարկերի ընդհանուր գումարը 2023-ին գրեթե կրկնապատկվել է:



Գծապատկեր 1. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, 10 խոշորագույն հարկատուների վճարած հարկերի ծավալը կրճատվել է շուրջ 24 մլրդ դրամով, իսկ 50 և 100 խոշորագույնների պարագայում ցուցանիշը աճ է արձանագրել՝ համապատասխանաբար 36 և 55 մլրդ դրամով (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Հունվար-սեպտեմբեր ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2022-ի համեմատությամբ ավելի քան 30% ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է մոտ 26 մլրդ դրամ՝ 2022-ի 20 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. 9 ամիսների համար կազմել է 28 անգամ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ

էականորեն ցածր է: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2023-ին 109 անգամ է, ինչը ևս զգալիորեն ցածր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 241 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ին այդպիսի հարկատուների թիվը 188 էր, 2021-ին՝ 150, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ: Նույն կերպ, 2023-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, 480 հարկատուի հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 377 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2023թ. դիտարկվող ժամանակահատվածում, խոշոր հարկատուների ցանկում բացակայում է 200 մլն դրամից պակաս հարկային վճարումներ կատարող հարկատուները: Մինչդեռ նախորդ տարվա ցանկում առկա էր 62, իսկ 2021-ին՝ 262 այդպիսի հարկատու, իսկ, օրինակ, 2020թ.դրանց թիվն էլ ավելի մեծ էր՝ շուրջ 400 (գծ. 5): Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետք էր վճարել շուրջ 244 մլն դրամի հարկ, այն դեպքում, երբ 2022-ին ցանկում ներառվելու համար բավարար կլիներ 187 մլն դրամը, իսկ 2021-ին՝ 142 մլն դրամի չափով հարկային պարտավորությունների կատարումը:

2023-ի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 170 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 135 էր, իսկ 2021-ին՝ 97: Նույն կերպ, 232 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվքանակը ավելացել է 28-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի ավելացումը՝ նախորդ տարվա համեմատ: 2023թ. հունվար-սեպտեմբերին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 35%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 31% էր (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 36%-ը ուղղակի հարկերն են ինչը ցածր է նախորդ մի քանի տարիների մակարդակից:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2023թ. առաջին 9 ամիսների արդյունքներով, 79 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 1 մլրդ դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 61 էր, իսկ 2021-ին՝ 45:

2023թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել ավելի քան 600 ընկերություններ, 2022-ին հանրապետությունում գործել է 567 այդպիսի կազմակերպություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2023թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ցանկի առաջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը

	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը, մլրդ դրամ	4.2	4.7	4.3	4.7	6.5	7.1
Շահութահարկ, մլն դրամ	701	875	656	606	971	1404
Եկամտային հարկ, մլն դրամ	631	807	763	798	826	1100
ԱԱՀ, մլրդ դրամ	1.6	1.87	1.8	1.95	2.36	2.8
Ակցիզային հարկ, մլն դրամ	500	628	661	541	640	736

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 7,1 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 6,5 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,4 մլրդ դրամ (2022-ին՝ 971 մլն դրամ), եկամտային հարկը՝ 1,1 մլրդ դրամ (2022-ին՝ 826 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,8 մլրդ դրամ (2022-ին՝ 2,4 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 740 մլն դրամ (2022-ին՝ 640 մլն դրամ):

Աղյուսակ 2. Ցանկի վերջին հարյուրյակի միջին վիճակագրական հարկատուի վճարած հարկերը, մլն դրամներով

	2018	2019	2020	2021	2022	2023
Ընդամենը	104.0	128.0	121.0	150.0	197.0	257
Շահութահարկ	14	19	18	16	21	29
Եկամտային հարկ	27	38	32	39	57	64
ԱԱՀ	50	60	60	73	88	110
Ակցիզային հարկ	2.9	2.8	3.7	6.7	2.8	0.5

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. առաջին 9 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 260 մլն դրամի հարկ (2022-ին՝ 200 մլն դրամ), շահութահարկը՝ 29 մլն դրամ (2022-ին՝ 21 մլն դրամ), եկամտային հարկը՝ 64 մլն դրամ (2022-ին՝ 57 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 110 մլն դրամ (2022-ին՝ 88 մլն դրամ):

Դիտարկվող ժամանակահատվածում նշանակալի կերպով փոխվել է նաև ցանկում ներառված հարկատուների տարածքային բաշխվածությունը: Այսպես, Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 81%-ն է, ինչը

նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 82%, ինչը մոտ 9 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա մակարդակից (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. Երևանի մասնաբաժինը, տոկոսներով

Աղյուսակ 3-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2022-2023թթ. ընթացքում: Ընտրված թվով 100 կազմակերպությունների 75 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այսպես, նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում չորսը ներկայացնում են ֆինանսաբանկային հատվածը: Հայաստանյան 18 բանկերից 15-ը խոշոր հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում են: 2023-ի 9 ամիսներին դրանց վճարած հարկերը կազմում են 110 մլրդ դրամ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այս նույն բանկերը վճարել էին 46 մլրդ դրամ:

Նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի աճի ցուցանիշով առաջատար են ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹԸ՝ +23 մլրդ դրամ, «Փրիթի Ուէյ»-ը՝ +21 մլրդ դրամ, Ամերիաբանկը՝ +16 մլրդ դրամ, Արդշինբանկը՝ +16 մլրդ դրամ, «Վայլդբերիզ» ընկերությունը՝ +12 մլրդ դրամ:

Իսկ ընդհանրապես, ցանկի առաջին հարյուրյակի ընկերությունների շուրջ կեսը նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալը աճել է առնվազն 1 մլրդ դրամով:

Դիտարկվող ընկերությունների շարքում 8 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ: Այս ցուցիչով ԶՊՄԿ-ից բացի առանձնանում է նաև «Թեղուտ» ընկերությունը, նաև՝ «Գազպրոմ Արմենիա»-ն:

Աղյուսակ 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2022	2023	Տարբերությունը
1	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	129.2	52.4	-76.8
2	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	41.8	39.5	-2.3
3	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	32.5	31.0	-1.5
4	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	7.4	30.1	22.7
5	«ՓՐԻԹԻ ՈՒԵՅ»	2.1	23.4	21.3
6	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	6.5	22.8	16.3
7	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	5	21.3	16.3
8	«ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ»	11.8	16.6	4.8
9	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	16.3	15.7	-0.6
10	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	11	14.0	3.0
11	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	12.4	13.6	1.2
12	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	12.5	12.6	0.1
13	«ՎԱՅԼԴԲԵՐՐԻԶ»	0.37	12.5	12.1
14	«ՖԼԵՇ»	11.3	12.2	0.9
15	«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	8.8	11.2	2.4
16	ԱԿԲԱ ԲԱՆԿ	5.7	10.9	5.2
17	«ՍԻԹԻ»	8.4	10.8	2.4
18	«ՅՈՒՔՈՄ»	5.6	9.7	4.1
19	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	8	8.7	0.7
20	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»	10.2	8.6	-1.6
21	ԻՆԵԿՈԲԱՆԿ	4.2	8.6	4.4
22	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	9.5	8.5	-1.0
23	«ՄԱՔՍ ՕԻԼ»	8.2	8.2	0.0
24	«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	3.2	7.8	4.6
25	ԷՎՈԿԱԲԱՆԿ	1.2	7.3	6.1
26	«ՄԵԳԱ ԹՐԵՅԴ»	5.8	7.0	1.2
27	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	6.1	6.9	0.8
28	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	5.9	6.9	1.0
29	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	3.1	6.7	3.6
30	«ՎԻԷՄ ԱՐՄԵՆԻԱ»	1	6.2	5.2

31	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	5.4	6.2	0.8
32	«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»	5.6	5.9	0.3
33	«ԿԱԲԱՐԿՈ»	5.1	5.5	0.4
34	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	4.2	5.5	1.3
35	«ՎԵՈԼԻԱ ՁՈՒՐ»	4.3	5.5	1.2
36	Այդի Բանկ	2	5.4	3.4
37	«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ»	5.9	5.4	-0.5
38	«ՆՈՐ ՁՈՎՔ»	1.2	5.3	4.1
39	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	3.4	5.1	1.7
40	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	4.2	5.0	0.8
41	«ԱՎՏՈԲԱՅ»	1.25	5.0	3.7
42	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	1.9	4.9	3.0
43	«ԱՎԱՆԳԱՐԴ ՄՈԹՈՐՍ»	2.3	4.9	2.6
44	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	1.65	4.8	3.2
45	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	4.2	4.7	0.5
46	«ԱՆԴԱԿՈ»	3.5	4.6	1.1
47	«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ»	4.1	4.6	0.5
48	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	5	4.6	-0.4
49	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	5.3	4.5	-0.8
50	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	3.3	4.4	1.1
51	«ԲԱՐՍԻՍ»	3.9	4.4	0.5
52	«ԴԻՋԻԹԵՅՆ»	3.2	4.3	1.1
53	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	3.9	4.2	0.3
54	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	3.3	4.2	0.9
55	«ԹԵԼ-ՍԵԼ»	3.2	4.1	0.9
56	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	3.3	4.1	0.8
57	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	4.2	3.9	-0.3
58	«ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ»	2.2	3.9	1.7
59	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	3.3	3.7	0.4
60	«ԷՊԱՄ ՍԻՍԹԵՄԶ»	2.5	3.7	1.2
61	«ԱԳ ԻՄՊԵՔՍ»	2.7	3.7	1.0
62	«ԱԹԵՆՔ»	2.8	3.7	0.9
63	«ՆԵՎԻՍ»		3.7	3.7
64	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	2.5	3.6	1.1
65	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ»	3.7	3.6	-0.1
66	«ԿԵՀ ԱՐՄԵՆԻԱ»		3.5	3.5
67	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	4	3.5	-0.5
68	«ԴԵՐԺԱՎԱ-Ս»	2.7	3.4	0.7
69	«ՍՊԱՅԿԱ»	1.9	3.4	1.5
70	«ՅՈՒԷՍԷՅ ԱՎՏՈԷՔՍՊՈՐՏ ԲՍԵ»	2.9	3.3	0.4
71	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»	2.7	3.3	0.6
72	«ԹԵՂՈՒՏ»	9.4	3.3	-6.1
73	«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ»	4.1	3.2	-0.9
74	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	3	3.2	0.2
75	«ՖՈՐՎԱՐԴ»	1.2	3.1	1.9

76	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	2.8	3.0	0.2
77	ՅՈՒՆԻԲԱՆԿ	1.8	3.0	1.2
78	«ԷԴԵԼՎԵՅՍ ԿԱ»	0.6	3.0	2.4
79	«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ»	0.9	3.0	2.1
80	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	3.4	3.0	-0.4
81	«ՔԱՌՄԱՌԿ»	1	3.0	2.0
82	«ԱՐՄԲՐՈԿ»	0.5	2.9	2.4
83	«ՊԻԿՍԱՐՏ»	3.1	2.9	-0.2
84	«ԱԴԱՄԻՈՒՄ»	2.6	2.9	0.3
85	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	0.8	2.8	2.0
86	«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ»	3.1	2.8	-0.3
87	«ՖԱՍԹ ԲԱՆԿ»	1	2.7	1.7
88	«ԱՐԿԱԹ»	1.7	2.7	1.0
89	«ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ»	1.3	2.6	1.3
90	«ՊԵՌՆՈ ՌԻԿԱՐ ԱՐՄԵՆԻԱ»	2.1	2.6	0.5
91	«ԷՐԵԲՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»	2.3	2.6	0.3
92	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	2.8	2.5	-0.3
93	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	3.8	2.5	-1.3
94	«ԷԼՔՈՐ ԴԻՍԹՐԻԲՅՈՒՇՆ»	2.5	2.4	-0.1
95	ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	1.4	2.4	1.0
96	«ԱՐՊԱՆԻՎ»	2.5	2.4	-0.1
97	«ԱՎԵՐՍ»	4.3	2.4	-1.9
98	«ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ»	2.4	2.3	-0.1
99	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»	2.4	2.3	-0.1
100	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»	1.6	2.3	0.7

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 1,27 տրլն դրամ, ինչը 17%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: 2023թ. մակարդակը բարձր է ոչ միայն 2022թ, այլ նաև դրան նախորդող, այդ թվում՝ տնտեսական առումով առավել բարենպաստ կամ մինչճգնաժամային համարվող ժամանակահատվածի նկատմամբ: Ավելին, 2018-ի համեմատությամբ, 1000 խոշոր հարկատուների վճարած հարկերի ընդհանուր գումարը 2023-ին գրեթե կրկնապատկվել է:

- ✓ շուրջ 55 մլրդ դրամով կամ 9,2 տոկոսով ավելացել է հարկային վճարումների ընդհանուր ծավալը 100 խոշոր հարկատուների պարագայում,
- ✓ 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 267 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 24 մլրդ դրամով,
- ✓ ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները կազմել են շուրջ 26 մլրդ դրամ՝ 2022-ի 20 մլրդ դրամի փոխարեն,
- ✓ 1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2023թ. 9 ամիսների համար կազմել է 28 անգամ, ինչը նախորդ տարիների համեմատությամբ էականորեն ցածր է,
- ✓ 2023թ. հունվար-սեպտեմբերի արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործող 241 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2022-ին այդպիսի հարկատուների թիվը 188 էր, 2021-ին՝ 150, իսկ դրան նախորդող տարիներին՝ էլ ավելի քիչ,
  - 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 480 է (2022-ին՝ 377),
  - 1000 խոշոր հարկատուների ցանկում 200 մլն դրամից պակաս հարկ վճարած ընկերություններ չկան: Նախորդ տարի դրանք 62-ն էին (2021-ին՝ 262, 2020-ին՝ մոտ 400),
  - 170 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 135 էր, իսկ 2021-ին՝ 97,
  - 232 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 200 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվքանակը ավելացել է 28-ով,
  - 2023թ. հունվար-սեպտեմբերին 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 35%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 31% էր,
  - 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 603 ընկերություններ (2022-ին՝ 567, 2021-ին՝ 494):
- ✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023-ի առաջին երեք եռամսյակների արդյունքներով վճարել է 7,1 մլրդ դրամի հարկ (2022-ին՝ 6,5 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 1,4 մլրդ դրամ (2022-ին՝ 971 մլն դրամ), եկամտային հարկը՝ 1,1 մլրդ դրամ (2022-ին՝ 826 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 2,8 մլրդ

դրամ (2022-ին՝ 2,4 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 740 մլն դրամ (2022-ին՝ 640 մլն դրամ):

- ✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2023թ. առաջին 9 ամիսների արդյունքներով վճարել է մոտ 260 մլն դրամի հարկ (2022-ին՝ 200 մլն դրամ), շահութահարկը՝ 29 մլն դրամ (2022-ին՝ 21 մլն դրամ), եկամտային հարկը՝ 64 մլն դրամ (2022-ին՝ 57 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 110 մլն դրամ (2022-ին՝ 88 մլն դրամ):
- ✓ Երևանում գրանցված հարկատուների թիվը ցանկում ներառվածների 81%-ն է, ինչը նախորդ տարվա համեմատությամբ փոքր-ինչ նվազել է: Մինչդեռ նրանց մասնաբաժինը վճարած հարկերի ընդհանուր ծավալում 2023-ին կազմել է 82%, ինչը մոտ 9 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա մակարդակից,
- ✓ Առաջին հարյուրյակի հարկատուների 75 տոկոսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը:
- ✓ Նախորդ տարվա համեմատությամբ բացարձակ արտահայտությամբ առավել մեծ աճ արձանագրած հարկատուների տասնյակում չորսը ներկայացնում են ֆինանսաբանկային հատվածը: Հայաստանյան 18 բանկերից 15-ը խոշոր հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում են: 2023-ի 9 ամիսներին դրանց վճարած հարկերը կազմում են 110 մլրդ դրամ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այս նույն բանկերը վճարել էին 46 մլրդ դրամ:
- ✓ Նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի աճի ցուցանիշով առաջատար են ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹԸ՝ +23 մլրդ դրամ, «Փրիթի Ուէյ»-ը՝ +21 մլրդ դրամ, Ամերիաբանկը՝ +16 մլրդ դրամ, Արդշինբանկը՝ +16 մլրդ դրամ, «Վայլդբերիզ» ընկերությունը՝ +12 մլրդ դրամ:
- ✓ Ցանկի առաջին հարյուրյակի ընկերությունների շուրջ կեսը նախորդ տարվա համեմատությամբ վճարած հարկերի ծավալը աճել է առնվազն 1 մլրդ դրամով:
- ✓ Ցանկի առաջին հարյուրյակից 8 հարկատու նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ պակաս է վճարել 1 մլրդ և ավելի դրամի չափով հարկ: Այս ցուցիչով ՃՊՄԿ-ից բացի առանձնանում է նաև «Թեղուտ» ընկերությունը, նաև՝ «Գազպրոմ Արմենիա»-ն: